«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՂԻՆԱԿ	ԳԱՅԱՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/	Դասվար
ՂԵԿԱՎԱՐ	Արմենուհի Մելքոնյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

- Ներածություն
- Գլուխ 1 ուսուցման և դաստիարակության գործընթացների փոխադարձ կապը տարրական դասարաններում
- Գլուխ 2 Ուսումնական դասագրքերի դերը, դրանց ներկայացվող պահանջ-մունքներն ու դաստիարակչական գործառույթները տարրաական դասարաններում1
- Եզրակացություններ
- Առաջարկություն
- Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հիմնահարցի արդիականությունը՝

Ընդհանրապես, ուսուցման և դաստիարակության մասին խոսելիս, պետք է չտարանջատել մեկը մյուսից, քանի որ ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում: Սակայն կրթական գործընթացում ուսուցման և դաստիարակության ոլորտները բավականին տարանջատվում են, ինչը հնարավորություն չի ստեղծում ապահովելու կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

Չնայած այն հանգամանքին, որ ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների ստեղծումը իրագործվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դաստիարակության մեջ գլխավորը միջավայրն է, որը ենթադրում է անձի կատարելագործման գործընթացը, միաժամանակ ներառում է անձի զարգացման բոլոր կողմերը, զարգացումն ու ձևավորումն ապահովող բոլոր գործոնները, այդ թվում նաև ուսուցումն ու կրթությունը:

Դաստիարակությունը լայն իմաստով , ուսումնասիրվում է էթիկայի, փիլիսոփայության, իրավագիտության և այլ հասարակական գիտությունների կողմից: Սակայն մանկավարժության մեջ այն նեղ իմաստով հասկացվում է որպես անձի վարքագիծ, բնավորություն: Իսկ նեղ իմաստով դաստիարակությունը անձի զարգացման և ձևավորման իրականացումն է , որը ներառում է նաև կրթությունը: Այսինքն, դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակականպատմական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց յանքի և աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Ուսուցումը ևս մանկավարժական գործընթաց է, որի ընթացքում իրականացվում է մարդու կրթությունը, դաստիարակությունը և զարգացումը: Այն աշակերտի իմացության զարգացման, նրա ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման և գիտելիքներ հաղորդելու գործընթաց է, որը կատարվում է մանկավարժի, ավելի կոնկրետ ուսուցչի, դաստիարակի, դասախոսի կողմից:

Ուսուցումը որպես մանկավարժական գործընթաց, նույնպես ունի երկու կողմ: Այն է՝ մանկավարժի՝ սովորեցնողի, ուսուցչի գործունեություն , որը կոչվում է դասավանդում, և աշակերտի՝ սովորողի գործունեություն, որը կոչվում է ուսում:

Կրթության որակի բարձրացումը որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների կիրառմամբ: Իսկ ակտիվ ուսուցումը ենթադրում է ուսումնական գործընթացում սովորողների ներառումը: Այս պարագայում սովորողը պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընացքում բացահայտի, մշակի և կիրառելի դարձնի ստացված գիտելիքները:

Թեև կրթությունը հիմնականում մտավոր զարգացման բնութագիր է, այն ակնարկում է նաև մարդու դաստիարակությունը: Նշանակում է ՝ կրթությունը ուսուցման և դաստիարակության արդյունք է, մարդու կայուն, կարելի է ասել ՝ անդարձելի բնութագիր է , որակ, մակարդակ է:

Ուսուցման և կրթության մեջ առկա է միջոցի և նպատակի հարաբերություն , իսկ ավելի կոնկրետ ուսուցումը միջոց է, կրթությունը՝ ուսուցման նպատակ և արդյունք: Պարզ և հասկանալի լեզվով ասած՝ ուսուցումը մարդուն, տվյալ պարագայում աշակերտին տրվող գիտելիքները, կարողություններն ու հմտություններն են: Հստակ կարող ենք ասել, որ ուսուցումն ունի երկկողմանի բնույթ. Դասավանդում և ուսուցում: Ընդ որում, դասավանդումն ուսուցչի գործունեությունն է, իսկ ուսումը՝ աշկերտի:

Ուսուցումն ու դաստիարակությունն հատկապես տարրական դասարաններում գտնվում են փոխադարձ, կարելի է ասել նույնիսկ անբաժանելի կապի մեջ: Ուսուցման և դաստիարակության միջոցող ոչ միայն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ են մատուցվում, այլև ձևավորվում է սովորողների հայացքները, համոզմունքները, գիտական աշխարհայացքը, վարքը: այդ ամենը, իհարկե իրականացվում է ուսումնական առարկաների, մեր պարագայում հատկապես, մայրենիի դասավանդման միջոցով:
Եթե ուսուցումը դաստիարակումն է, ապա դաստիարակությունն էլ նպաստում է բարեհաջող ուսուցմանը: այս իմաստով էլ ուսուցման գործընթացը ենթադրում է կրթականդաստիարակչական գործառույթների միասնականություն: Իսկ ուսուցման կրթական և դաստիարակչական գործառույթների միասնականությունը դրսևորվում է նաև այն հանգամանքով, որ ուսուցման մեթոդներն հանդես են գալիս դաստիարակության մեթոդների առանձին տարրերի դերում, իսկ դաստարակության մեթոդները ՝ ուսուցման խթանման մեթոդների:
Ամեն պարագայում, եթե ուսուցիչը, ինչպես հարկն է չակտիվացնի աշակերտների ճանաչողական գործունեությունը , նրանց չդարձնի սովորող սուբյեկտներ, դրանց իրականացման համար չորոնի նոր ուղիներ ու միջոցներ, որքան ոլ նա հաղորդի նոր ու հարուստ գիտելիքներ, միևնույնն է, սողորողները այն չեն յուրացնի: Ուրեմն ՝ ուսուցման գործընթացում ուսուցչի և աշակերտների գործունեությունը փոխկապակցված, փոփոխվող փոխազդեցություններ են, որոնք պետք է լինեն իմաստալից և պահպանեն նոր և ժամանակակից չափորոշիչներն ու պահանջմունքները:
Ուսուցման գործընթացն իրականացնելիս շատ կարևոր և առաջնային դեր են խաղում ուսումնական դասագրքերը: Ցանկված դասագրքի բովանդակությունն ու կառուցվածքն արտահայտում են կրթության ոլորտում կատարվող մանկավարժամեթոդական
պահպանելով չափորոշչային և առարկայական ծրագրերում սովորողների գիտելիքներին և կարողություններին տարեվերջին ներկայացված վերջնարդյունքները: Այս վերջնարդյունքների ապահովման խնդիրները լուծելու նպատակադրման արդյունավետության ապահովմանը մեծապես նպաստում են մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցներում ներկայացված հարցերն ու առաջադրանքները, իսկ դասագրքերի օժանդակ բաղադրիչները իրենց հերթին նպաստում են ոչ միայն ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը, այլև ամբողջացնում և ամրապնդում են ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները: Այս իմաստով, տարրական դասարաններում դասագրքերը հարուստ են օժանդակ բաղադրիչներով, և դրանց մեթոդապես ճիշտ կիրառումը մեծապես կնպաստի դասագրքերում իրենց տեղն զբաղեցրած ուսումնական նյութերի նկատմամբ սովորեցնողների հետաքրքրության զարգացմանը, մայրենիի նկատմամբ սեր առաջացնելուն: Հենց տարրական դասարաններում է, որ աշակերտները պատկերացում են կազմում իրենց շրջապատող երևույթների, դպրոցական կյանքի հետագա զարգացման, ընթացքի, ինչպես նաև ձեռք բերվող գիտելիքների վերաբերյալ: Նրանք սկսում են մեծ պատասխանատվությամբ ու հետաքրքրասիրությամբ սովորել: Այս պարագայում շատ կարևոր նշանակություն ունի դասագիրքը, որը իր մեջ ներառում է տվյալ ուսումնական առարկայի գիտական գիտելիքների հիմունքները, համապատասխանում է տվյալ ուսումնական ծրագրերի պահանջներին և նախատեսված է ուսումնական նպատակների իրագործման համար: Այն պետք է շարադրված լինի պարզ և մատչելի: Ձետեղված նյութերը պետք է լինեն ճշգրտված, ունենան գաղափարական ուղղվածություն: դասագրքի նկարազարդումները պետք է լինեն համապատասխան տվյալ նյութի բովանդակությանը: Այն

պետք է արթնացնի սովորողների որոնողական միտքը, զարգացնի ստեղծագործական միտքը և այլն: Ահա այս պահանջմունքներն են դրված դասագրքերի ստեղծման, նորացման առաջ:
Ցանկացած ուսումնական առարկայի դասագրքում ներկայացվում է բոլոր աշակերտների համար պարտադիր որոշակի ուսումնական բովանդակություն, որի հասանելիությունը տարբեր կարողություններ ունեցող աշակերտների համար կարգավորում է ուսուցիչը: Այսինքն, հենց ուսուցիչն է որոշում, թե երբ և ինչպես է օգտագործելու դասագիրքը:
Տարրական դասարանների ուսումնական դասագրքերում առաջին հերթին կարևորվում են բնագրերը, տեքստերի ճիշտ ընտրությունը, կառուցվածքը: Ուսումնական դասգիրքը նախատեսում է երեք մանկավարժական գործառույթների իրականացում: Այն է՝ Հանրակրթական, Դաստիարակող, Զարգացնող, որոնց հերթականությամբ կանդրադառնանք մեր կատարած աշխատանքում:

Հետազոտության նպատակը՝

Սույն հետազոտական աշխատանքում մեր նպատակն էր խթանել ուսուցման և դաստիարակության գործընթացների փոխադարձ կապը, ինչպես նաև շեշտադրել ուսումնական դասագրքերի դերը, դրանց ներկայացվող պահանջներն ու դաստիարակչական գործառույթները տարրական դասարաններում:

Հետազոտության խնդիրները՝

- ուսումնասիրել ուսուցման և դաստիարակության գործընթացների փոխադարձ կապը,
- ուսումնասիրել ուսումնական դասագրքերի դերը,
- ուսումնասիրել ուսումնական դասագրքերին ներկայացվող պահանջներն ու դաստիարակչական գործառույթները տարրական դասարաններում:

Գլուխ 1
Ուսուցման և դաստարակության գործընթացի փոխադարձ կապը տարրական դասարաններում

Հանրակրթական դպրոցում կրտսեր դպրոցական տարիքը այն տարիքն է, երբ ձրավորվում է առաջին կազմակերպված,
հետաքրքրությունները ուսումնական գործընթացի նկատմամբ : Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են:
Կրտսեր դպրոցական տարիքը ուսումնական և դաստիարակչական առավել բուռն կազմավորման շրջան է, որը ուղղված է հոգեկան այն հիմնական գործընթացների և անձնավորության հատկությունների ձևավորմանը, որոնք բնորոշում են զարգացման տվյալ շրջանի գլխավոր նվաճումներին: Կրտսեր դպրոցականները պատասխանատվությամբ ու հետաքրքրությամբ են տիրապետում գիտելիքներին, հմտություններին ու ունակություններին: Նրանք սովորում են կարդալ, գրել, հաշվել և այլն: Այս տարիքում

անձնավորության զարգացման վրա ազդում են ոչ միայն ուսումնական, այլ նաև գործունեության մյուս տեսակները՝ խաղը, հաղորդակցումը և աշխատանքը:
Ուսուցումը այնպիսի գործընթաց է, որը բխում է մարդու՝ որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտի վերարտադրման անհրաժեշտությունից: այստեղից էլ բխում է ուսուցման սոցիալական գործառույթը՝ հասարակության պահանջներին համապատասխան անձի ձևավորումը: Հայտնի մանկավարժ Յու. Բաբանսին ուսուցման գործընթացը սահմանում էորպես ուսուցիչների և աշակերտների փոխկապակցված, իրար հաջորդող և փոփոխվող փոխազդեցություն , որի ընթացքում լուծվում են սովորողների կրթության, դաստիարակության և ընդհանուր զարգացման խնդիրները: Ուսուցումը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է, ճանաչողական գործունեություն, որը խթանում է սովորողների՝ գիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու գործունեությունն իրենց ստեղծագործական կարողությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք ձևավորելու, բարոյական որակներ ու համոզմունքներ ձեռք բերելու համար:

Ուսուցման գործընթացն ունի երկկողմանի բնույթ՝ դասավանդում և ուսուցում: Դասավանդումն ուսուցչի գործունեությունն է, իսկ ուսումը՝ աշակերտի կամ աշակերտական կոլեկտիվի:
Դասավանդումն իրականացնում է ուսուցիչը, որի ընթացքում՝
• առաջադրում է ուսումնական գործընթացի նպատակները, ձևավորում է սովորողների դրդապատճառներն ու պահանջմունքները:
• Որոշում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ ըստ տարբեր մակարդակների ուսուցման միջոցների ու պահանջների:
• Կազմակերպում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը ուսումնական նյութի շրջանակներում:
• Աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալ- մշակութային փորձը, անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն է տրամադրում:
• Սովորողների ուսումնական գործընթացին հաղորդում է դրական հուզական բնույթ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման միջոցով:
• Կարգավորում և վերահսկում է սովորողների ուսումնական գործունեությունը, գնահատում է սովորողների ուսումնական գործունեությունը, գնահատում է այդ գործունեության արդյունքները:
Ուսումը աշակերտների կողմից սոցիալ-մշակութային փորձը, գիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները յուրացնելու գործընթացն է , որի կարևոր պայմանը նրանց ինքնուրույնության ապահովումն է:
Ուսուցման գործընթացը անհնար է առանց ուսուցչի և աշակերտների միաժամանակյա գործունեության: Ուսուցչի համար կարևոր է աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացումը, երբ հնարների, մեթոդների կիրառումը գիտելիքների առավելագույն յուրացման համար:
Ուսումը և դասավանդումը սերտորեն փոխկապակցված են միմյանց և չպետք է առանձնացվեն , այսինքն՝ ուսուցման գործընթացը սուբյեկտ- սուբյեկտ փոխազդեցությունն է, որում աշակերտները մշտապես պեք է գտնվեն սուբյեկտի դերում, որը բխում է անձնակենտրոն կրթության հայեցակարգային դրույթներից և արդիական է հատկապես տեղեկատվական հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում: Այսպիսով, ուսումնական գործընթացը դասավանդողի և սովորողի երկկողմանի, միմյանց

փոխկապակցված ակտիվ, նպատակաուղղված փոխազդեցությունն է, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում հասարակական փորձ, վարքի և գործունեության դրսևորումների համար: Աշակերտների և ուսուցիչների միջև փոխազդեցություններն ընթանում են երկու ձևով՝ անմիջական և միջնորդավորված: Անմիջական փոխազդեցության դեպքում միասնաբար լուծվում են ուսուցման, կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները: Միջնորդավորված փոխազդեցության դեպքում սովորեցնողներն ուսումնական առաջադրանքները , օրինակ՝ տնային առաջադրանքը, ինքնուրույն աշխատանքը և այլն, կատարում են առանց ուսուցչի անմիջական հսկողության: Միջնորդավորված գործողություններ աշակերտները կարող են կատարել նաև դասաժամին՝ լուծելով խնդրահարույց, առաջնահերթ խնդիրներ,առաջադրանքներ: Միջնորդավորված փոխազդեցությունը ևս ենթադրում է դասավանդողի պլանավորման, կազմակերպման, վերահսկողական գործառույթներ: Ուսուցման գործընթացում լուծվում են հետևյալ հիմնախնդիրները՝ սովորողների ակտիվության խթանում, սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպում գիտելիքների և կարողությունների տիրապետման ուղղությամբ, տրամաբանական գործընթացների, հիշողության, ուշադրության, մտածողության, երևակայության, ըմբռնումների զարգացում, ինքնուրույն աշխատանքի հմտությունների, ինքնակրթության կարողությունների զարգացում, սովորողների գիտելիքների,աշխարհայացքի, բարոյամշակութային արժեքների, համոզմունքների ձևավորում: Ուսոցման գործընթացում իրականացվում են մի շարք գործառույթներ, որոնցից առանձնացվում են կրթական, դաստիարակչական, զարգացնող գործառույթները: Ընդ որում, ուսուցման կրթական գործառույթի էությունը սովորողների մեջ գիտելիքների, կարողություններիև հմտությունների ստեղծագործական գործունեության ձևավորումն է:Այն ենթադրում է գիտական գիտելիքների յուրացում: Այս պարագայում գիտական են կոչվում այն գիտելիքները, որոնք ապացուցված են փորձով, հասցված են հասկացությունների աստիճանի և

ձևակերպված են կանոնների, օրենքների, օրինաչափությունների ձևով: Սա նեղ իմաստով:Իսկ լայն իմաստով կրթական գործառույթը ենթադրում է ոչ միայն ներուսումնական, այլև ընդհանուր մշակութային գիտելիքներ,որոնք ձեռք են բերվում ոչ միայն ուսումնական առարկաների, այլև տեղեկատվական տարբեր աղբյուրների, տպագիր և էլեկտրոնային լրացուցիչ գրականության միջոցով: Այս դեպքում ուսուցման գործընթացում գիտելիքները դառնում են անձի սեփականությունը,նրա ճանաչողականության մի մասը:
Ուսուցման դաստիարակչական գործառույթը ենթադրում է , որ վերը նշված ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջոցով ձևավորվում են սովորողներիիդեալները, համողմունքները, քաղաքացիական որակները, հայացքները և այլն: Ուսուցման և դաստիարակության միջև կապն օբյեկտիվ օրինաչափություն է: Ուսոցման դաստիարակչական գործառույթը ստեղծում և ձևավորում է անձի մեջ բարոյական, գեղագիտական, աշխարհայացքային, հասարակական կյանքում համարժեք վարքի և գործունեության եղանակները, պահանջմունքները, մշակույթը, արժեհամակարգը:Այս գործառույթի իրականացումը կախված էուսուցման մեթոդներից, ուսուցչի և աշակերտի հաղորդակցման բնույթից, կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտից, ուսուցչի հաղորդակցման ոճից:
Կրտսեր դպրոցականների անձնային որակները աստիճանաբար ձևավորվում են ուսումնառության գործընթացում ուսումնական և գործունեության մյաուս տեսակների միջոցով, որոնք շարունակվում են զարգանալ դեռևս դեռահասության շրջանում:

Ուսումնական գործունեությունը որպես առաջատար, ուղղված է հոգեկան այն հիմնական գործընթացների ու անձնավորության հատկությունների ձևավորմանը, որոնք բնորոշ են զարգացման տվյալ շրջանի գլխավոր ձեռքբերումներին:
Ուսումնական գործունեությունը, բոլոր բաղադրիչների առկայությամբ պատրաստի չի տրվում: Այն դեռ ենթակա է ձևավորման: Նախ և առաջ երեխային պետք է սովորեցնել սովորել, ապա ուսուցման գործընթացում կրթել և դաստիարակել: Այս պարագայում, ուսուցման գործընթացուի ընթացքում յոիրացված գիտելիքները, կարողությունները, հմտությունները դառնում են աշակերտի վաստակնու ձեռքբերումը,որին զուգընթաց, յուրաքանչյուր ուսուցիչ իրականացնում է դաստիարակչական գործունեություն՝ աշակերտների միջև ձևավորելով տարբեր անձնային որակներ:
Որպես պարտադիր կանոն , ուսումնական գործնեության ընթացքում պահանջվում է կարգ ու կանոնով կատարել բոլորի համար նախատեսված կանոններ, որոնք իրենց բնույթով վարքի մշակված եղանակներ են և ապահովում են դասարանական խմբային աշխատանքների արդյունավետությունը:
Ուսումնական և դաստիարակչական գործունեության ընթացքում երեխան փոխում է նաև իր հարաբերությունները հասակակիցների, չափահասների հետ, որը ավելի բարձր մակարդակի վրա է դուրս գալիս : Նրանք սովորում են ճիշտ հաղորդակցվել, կարգավորել իրենց փոխհարաբերությունները:Դրանք աստիճանաբար դառնում են անմիջականից միջնորդավորված:
Ուսումնառությունը տարբերվում է կենսագործունեության բոլոր տեսակներից:Նույնիսկ աշխատանքային ամենապարզ գործունեության շնորհիվ ստացվում է որոշակի նյութական արդյունք: Այդ ընթացքում սովորողը աշխատանքային գործունեության մեջ մտնելով ստանում է իր համար որոշակի զգզլի արդյունք,որը յուրաքանչյուրի մոտ առանձնահատուկ է և յուրովի:
Ուսուցչի ղեկավարությամբ երեխան գործածում է գիտական հասկացություններ և ըստ իր կարողության յուրացնում դրանք : Միաժամանակ նա ոչ մի փոփոխություն չի մտցնում գիտական հասկացությունների համակարգում: փոփոխություն տեղի է ունենում հենց դպրոցականի էության մեջ:
Այսպիսով, ուսումնական գործնեությունը անհատական ակտիվացման յուրահատուկ ձև է, որի ընթացքում կրտսեր դպրոցականը ոչ միայն յուրացնում է գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, այլև սովորում է իր առաջ դնել ուսումնական խնդիրներ, որոնել և գտնել գիտելիքների յուրացման և կիրառման եղանակները, ինչպես նաև վերահսկել և գնահատել սեփական գործողությունները:
Թեև կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխաների կյանքում առաջատար գործունեությունը դառնում է ուսումնական աշխատանքը, սակայն դպրոցական տարիքում իրականացվում է ոչ միայն ուսումնական համակարգված գործունեություն՝ տարրական գիտելիքների յուրացման , կարողությունների ու հմտությունների ձեռքբերման բնագավառում, այլև ապահովում է նաև դաստիարակության խնդիրը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում կրտսեր դպրոցականների անհատական որակներում և կայուն հիմք են դառնում հետագայում՝ ամբողջ կյանքի ընթացքում համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:
Տարրական դասարաններում առաջնային և կարևորագույն խնդիրներից մեկը կրտսեր դպրոցականների դաստիարակչական գործընթացի կազմակերպումն ու հստակեցումն է, որը կրտսեր դպրոցական տարիքում ունի էական դեր և նշանակություն:
Հստակ կարող ենք ասել,որ դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեություն է որի շնորհիվ լուծվում են

դիտարկվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները: Դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:
Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականների դաստիարակչական գործընթացի առաջին և կարևորագույն առանձնահատկությունը այն է, որ նրանում հանդես են գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Օբյեկտիվ գործոնները այն պայմաններն են, որտեղ գործում է դաստիարակվողը, այս դեպքում օբյեկտիվ գործոնը դպրոցն է, ուսումնական միջավայրը, իսկ սուբյեկտիվ գործունը դաստիարակողի՝ ուսուցչի արվեստն է, նրա մանկավարժական վարպետությունը:քանի որ կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացը սկսվում է ուսուցչից, հետևաբար, մինչև դաստահարակությունը սկսելը ուսուցիչը պետք է լրջորեն ուսումնասիրի դաստիարակվողների՝ սովորողների հոգեբանությունը, սոցիալական, քաղաքական, տնտեսական այն պայմանները, որոնցում նա ապրում է: Բացի այդ հաշվի է առնվում նաև սովորողների տարիքայինև անհատական առանձնահատկությունները և նոր միայն կազմակերպում և իրականացնում է դաստիարակության գործընթացը:
Տարրական դասարաններում սովորողների դաստիարակության գործընթացի երկրորդ առանձնահատկությունն այն է, որ պետք է հասկանալ դաստիարակության նպատակի, բաղադրամասերի սկզբունքների, մեթոդների, հնարների ու միջոցների փոխկապակցված կատարումը: որպեսզի ուսուցիչը ապահովի աշակերտների համակողմանի զարգացումը, այն պետք է անցկացվի բավականաչափ բազմակողմանի, համալիր ձևով:
Երրորդ կարևորագույն առանձնահատկությունը դաստիարակության գործընթացի նպատակասլաց, պլանավորված անընդհատ կազմակերպումն է: ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հաշվի առնի այդ հանգամանքը և
դրանից ելնելով պլանավորի և անցկացնի իր ամեն դասը՝ ունենալով կոնկրետ պլան և նպատակ:այդ պատճառով էլ շատ է կարևորվում դաստիարակության գործընթացի անընդհատությունը: Ուսուցիչը առաջին դասարանից սկսած, յուրաքանչյուր դասաժամի ընթացքում պետք է իրականացնի դաստիարակություն և այդ գործընթացը պետք է լինի մշտական:
Սովորողների դաստիարակության գործընթացի չորրորդ կարևորագույն առանձնահատկությունը դպրոցի և ընտանիքի մանկավարժական ներգործության միասնականությունն է: Երբ երեխան սկսում է դպրոց հաճախել,շատ դեպքերում ծնողների մոտ այնպիսի համոզմունք է ձևավորվում, թե դաստիարակության ծանր բեռը դրվել է դպրոցի և ուսուցչի վրա, և երեխայի դաստիարակության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է դպրոցի վրա:Սակայն դպրոցում դաստիարակության ներգործությունը երբեք միայնակ չի կարող լինել: Այն մշտապես պետք է ուղեկցվի ևնտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: հակառակ դեպքում երկուսն էլ չեն կարող դրական արդյունք տալ: Կարևոր է ծնողների կողմից երեխաների մոտ ձևավորել սեր՝ դպրոցի, հարգանք՝ ուսուցչի և հասակակիցների նկատմամբ:
Միանշանակ կարող ենք ասել,որ սովորողների դաստիարակության գործընթացի ճիշտ կազմակերպման համար կարևոր է դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցության ապահովումը:
Դաստիարակության անմիջական ազդեցությունը ուսուցման գործընթացում պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ուղղված է սովորողների անհատականության ձևավորմանը և միայն այդ փոխադարձ կապի դեպքում է ուսուցումը դառնում անձնապես իմաստալից:

Դաստիարակության և ուսուցման կապը միակողմանի լինել չի կարող:Ինչպես ուսուցումը որոշակի պայմաններում ազդում է դաստիարակության վրա, այնպես էլ դաստիարակությունը ազդում է ուսուցման արդյունավետության , որակի բարձրացման վրա: Ուսուցումը մարդուն դաստիարակում է տվյալ հասարակությանը համապատասխան, դառնում է զարգացնող գործընթաց և դրա բովանդակությունը համապատասխանում է սովորողների կարիքներին, դրդապատճառներին և հետաքրքրություններին:Դրանց փոխկապակցվածության հոտևանքով տեղի է ունենում փոփոխություն հենց երեխայի մեջ,որը գործողությունէ ինքնփոփոխման ուղղությամբինչի արդյունքում բուն սուբյեկտում տեղի
ունեցած փոփոխությունն է:
այսպիսով, ուսուցումը և դաստիարակությունը միասնական և անբաժան գործընթաց է, որը ենթադրում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտություններ, ստեղծագործական գործունեության, փորձի, անձնային որակների,աշխարհայացքի ձևավորման և զարգացման լավագույն միջոց: ողջ մանակավարժական գորխընթացը տարրական դասարաններում կազմակերպվում և կառուցվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ, որն էլ հնարավորություն է տալիս ձևավորել տվյալ հասարակությանը համապատասխան քաղաքացի:

ԳԼՈՒԽ 2

Ուսումնական դասագրքերի դերը , դրանց ներկայացվող պահանջներն ու
դաստիարակչական գործառույթները
տարրական դասարաններում

Դասագիրքը գիրք է, որը նախատեսված չէ ընթերցանության համար:
Բեռնարդ Շոու Ուսունական դասագրքերի խնդիրը վերջին տարիներին հայտնվել է մանկավարժության, հոգեբանության , մասնավոր մեթոդիկաների, առարկայական ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Այսօր արդեն մեծ հետաքրքրություն են առաջացնում այն հարցերը, թե ուսումնական դասագրքերը ինչ տող են զբաղեցնում ողջ կրթական գործընթացում, Ինչ ժամանակակից գործառույթներ ունեն սովորողների դաստիարակության գործում, և ինչպես են ազդում կրթության որակի բարձրացման վրա:
Մանկավարժական ժամանակակից գրականության մեջ գոյություն ունի ուսումնական դասագրքերի տարբեր սահմանումներ ու նկարագրություններ: Դրանք ամբողջացնելով, կարելի է ասել, որ ուսումնական դասագիրքն այն գիրքն է, որը բովանդակում է տվյալ ուսումնական առարկայի գիտական գիտելիքների հիմունքները, շարադրված է ըստ դիդակտիկական սկզբունքների, համապատասխանում է ուսումնական ծրագրերի պահանջներին, նախատեսված է ուսումնական նպատակների իրագործմանհամար և բխում է հասարակության պահանջմունքներից, գիտատեխնիկական առաջընթացի ժամանակակից միտումներից:
Ուսումնական ցանկացած դասագիրք իրականացնում է հետևյալ գոր-
ծառույթները.

• դրդապատճառային գործառույթ, որն արտահայտվում է սովորողների համար այնպիսի խթանիչների ստեղծմամբ, որոնք նրանց մղում են տվյալ առարկայի ուսումնասիրմանը,ձևավորում են հետաքրքրություններ և դրական վերաբերմունք,

• տեղեկատվական գործառույթ, որը թույլ է տալիս ընդլայնել գիտելիքների ծավալը տեղեկատվության մատուցման բոլոր մատչելի միջոցներով,
• վերահսկողաշտկողական գործառույթ, որը ենթադրում է ուսուցման ընթացքի և արդյունքների ստուգման, ինքնագնահատման և շտկման հնարավորություններ, ինչպես նաև անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորման համար մարզողական վարժությունների լայն բազան՝ ներառյալ տեսա և լսանյութերը,
• դաստիարակչական գործառույթ,որը ենթադրում է դասագրքի բովանդակությանը,որը հնարավորություն կտա սովորողների մեջ ձևավորել անձնային որակներ:
Ուսումնական դասագիրքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջմունքներին.
Շարադրված լինի պարզ և մատչելի

Դրանում շարադրված նյութերը պետք է լինեն գիտականորեն ճշգրտված, ունենան գաղափարական ուղղվածություն:
Դասագրքի նկարագարդումները պետք է լինեն բովանդակային, գրավիչ և համապատասխանեն սովորողների տարիքին:
Դասագիրքը պետք է արթնացնի սովորողների որոնողական միտքը, զարգացնի ստեղծագործական մտածողությունը, ճանաչողական ընդունակությունները, ինքնուրույն աշխատանքի հմտությունները և համապատասխանի սովորողների
տարիքային առանձնահատկություններին:

Դասագիրքը ուսումնական հետազոտության ինքնուրույն օբյեկտ է, որը տարրական դասարաններից սկսած դպրոցում մեծ դեր ու նշանակություն ունի: Յուրաքանչյուր դասագիրք ունի նեղ առարկայական ուղղվածություն: Ենթադրվում է , որ դրա բովանդակությունը և կառուցվածքը սահմանվում են համապատասխան առարկայի գիտական գիտելիքների տրամաբանական կապերով: Ուսումնական դասագրքերում ներկայացված ուսումնական գիտելիքները դիտարկվում են որպես գիտական գիտելիքների նախագծում, որը հարմարեցված է տարբեր տարիքր աշակերտների կողմից դրա յուրացման հնարավորությունների հիման վրա:Անշուշտ, դասագիրքը գիրք է , որտեղ ներկայացված է ուսումնական ոռարկայի գիտական, հետևողակն, խիստ և ճշգրիտ շարադրված բովանդակությունը: Ուսումնական դասագրքում շարադրված առարկայական գիտելիքները բավարար հիմք են հանդիսանում ուսումնաճանաչողական գործունեության մեթոդների և հնարների ձևավորման համար:
Վերջին շրջանում ժամանակակից դպրոցական ուսումնական խնդիրների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացնում ուսումնական դասագրքերի հարցը, դրանց դերը սովորողների դաստիարակության գործում, որը լինելով կարևորագույն մշակութային արժեք, հանդիսանում է առաջնային գործոններից մեկը ուսումնական և դաստիարակչական գործընթացներում:
Դասագրքում ներկայացվում է բոլոր աշակերտների համար պարտադիր որոշակի ուսումնական բովանդակություն, որի յուրացման տեմպը, քանակը, բարդության մակարդակը յուրաքանչյուր աշակերտի համար կարգավորում է ուսուցիչը: Այլ կերպ ասած՝ հենց ուսուցիչն է որոշում, թե երբ և ինչպես է օգտագործվելու դասագիրքը, իսկ աշակերտներին մնում է միայն կատարել իրենց համար նախատեսված գործառույթները, օրինակ՝ առարկայական խնդիրների լուծում, բնագրի ընթերցում, վերարտադրում, և այլն:
Ուսումնական դասագրքերը նախատեսված չեն անհատական

աշխատանքի կազմակերպման համար , քանի որ այս գործառույթը պատկանում է ուսուցչին: Ընդ որում, որպես կանոն, գերիշխում է այն ենթադրությունը, համաձայն որի ուսուցիչը կարող է կատարել ուսուցման բոլոր գործառույթները, այդ թվում՝ աշակերտների անհատականացման գործառույթը:
Հետևաբար կարող ենք նշել, որ տարրական դասարաններից սկսած ուսումնական դասագիրքը օգնական ուժ է համարվում յուրաքանչյուր ուսուցչի համար և ուղղորդում է նրան ուսումնական գործընթացը պլանավորելիս: Այս դեպքում ուսուցիչը պետք է կազմի անհատական առաջադրանքներ, վարժանքներ և այլ դիդակտիկ նյութեր՝ աշակերտների հետ անհատական աշխատանքի համար:
Դիտարկելով տարրական դասարաններում կիրառվող ուսումնական դասագրքերի բովանդակությունը, կարող ենք առանձնացնել դասագրքերի հիմնական գործառույթները, դրանց ներկայացվող պահանջները:
• Դասագիրքը ծառայում է ծրագրային նյութ յուրացմանը, օգնում է դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքների ամրապնդմանը:
• Դասագիրքը պետք է հասանելի լինի ինքնուրույն ընթերցման և հասկանալու համար:
• Դասագիրքը պետք է պարունակի նյութ տնային պայմաններում ինքնուրույն աշխատանքի համար:
• Դասագիրքը պետք է հետաքրքրի աշակերտներին:

• Դասագրում պետք է լինի պարտադիր ուսուցման նյութ և բացատրող նյութ:
Տարրական դասարաններում կիրառվող դասագրքերը շատ մեծ նշանակություն ունեն սովորողների ուսումնական և դաստիարակչական գործընթացները կազմակերպելիս: Այդ գործում մեծ կարևորություն ունի ուսումնական դասագրքի կառուցվածքը և դրա հիմնական բաղադրիչները:
Տարրական դասարաններում ուսումնական դասագրքերի մասին խոսելիս, պետք է շատ մեծ ուշադրություն դարձնել դրանց բովանդակությանը, կառուցվածքային առանձնահատկություններին, որոնք շատ մեծ դեր և նշանակություն ունենսովորողների կրթական և դաստիարակչական գործընթացներում:
Տարրական դասարանների ուսումնական դասագրքերում առաջին հերթին կարևորություն է տրվում բնագրերի, տեքստերի ճիշտ ընտրությանը: Հիմնականում դասագրքերում ներառված բնագրերը ընտրվում են հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները: Դրանց հիմնական բավանդակությունը ունենում է և ուսումնական, և դաստիարակչական նշանակություն: Բնագրերը ծառայում են որպես ուսումնական տեղեկատվություն, ուսումնասիրության և յուրացման համար պարտադիր հիմնական աղբյուր:Բնագրի բովանդակությունը կատարում է գիտելիքների կազմակերպման գործառույթ, աշակերտների մոտ ձևավորում է գիտական մտածողություն և տրամաբանություն: Մեծ նշանակություն ունեն նաև դասագրքերում ներառված լրացուցիչ նյութերը, որոնք նպաստում են գիտական տեղեկությունների և դասագրքի հուզական ազդեցության բարձրացմանը, օրինակ՝ դասագրքերում ներառված առածներն ու ասացվածքները, որոնք մեծ դաստիարակչական նշանակություն ունեն:
Բավականաչափ կարևոր է նաև դասագրքերի կառուցվածքը, որը ուղղորդում և խթանում է սովորողների մտավոր գործունեությունը ուսումնական բովանդակության յուրացման գործընթացում, դրանով իսկ նպաստում սովորողների ճանաչողական ներուժի զարգացմանը և ուսումնական նյութի ինքնուրույն յուրացմանն ու սովորելուն:

Տարրական դասարաններում սովորողների ուսուցման և դաստիարակության գործում մեծ նշանակություն ունեն նաև դասագրքերի պատկերազարդ լինելը: Պատկերազարդ նյութերը դասագրքի կարևորագույն կառուցվածքային առանձնահատկություններից մեկն է, որը ևս նպաստում է ուսումնական նյութի ակտիվ յուրացմանը,գաղափարական, գեղագիտական և հուզական ներուժի զարգացմաննու ձևավորմանը:
Դասագրքի կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ նրա կողմնորոշման գործառույթն է, որը դասագրքի հետ աշխատելիս զարգացնում է սովորողների ուշադրությունը և արագ կողմնորոշվելու կարողությունը:
Դ.Դ. Զուևը առանձնացրել է ուսումնական դասագրքերի հետևյալ գործառույթները. տեղեկատվական, կանոնակարգվող, ամրապնդող, ինքնակրթող, համակարգող, ուսուցանող, դաստիարակողև զարգացնող:
Ուսումնական գործընթացում դասագրքի նշանակությունը որոշվում է այն հանգամանքով, որ դասագիրքը ուսուցման գործընթացի ռազմավարական մոդել է, քանի որ արտացոլում է հեղինակային խմբի ընդունված ուսուցման նպատակները, կրթության բովանդակության բաղադրիչները, մեթոդներն ու դրա կազմակերպչական ձևերը և միաժամանակ ուսուցման գործընթացի տակտիկական մոդել է, որը բացահայտում է ուսումնական նյութի շարադրանքի հաջորդականությունը, սահմանում է ուսումնական գործընթացի բովանդակությունը:
Որպես դիտարկում, նոր տեսանկյունից դասագիրքը դիտարկվում է որպես այնպիսի ավանդական գործառույթ, ինչպիսին տեղեկատվության համակարգումն է: Դասագրքում ուսումնական նյութի շարադրանքը պետք է որոշվի ոչ միայն տվյալ առարկայի տրամաբանական կառուցվածքով, այլև դպրոցականների ճանաչողական գործունեության զարգացման օրինաչափություններով՝ դրանով իսկ նպաստելով դպրոցականների մոտ տրամաբանական մտածողության ձևավորմանը: Բացի այդ, ուսումնական դասագրքի կարևորագույն նշանակումներից մեկը աշակերտին ուսումնական նյութի միջոցով ինքնուսուցման կազմակերպման եղանակների յուրացումն է, որը նրան հնարավորություն կտա ինքնուրույն աշխատել դասագրքերով:
Այսպիսով, ուսումնական դասագրքի հիմնական գործառույթներից մեկը
պետք է համարել սովորողների ճանաչողական գործունեության ուղեցույցը, որի ընթացում ուսուցման նպատակներին և ծրագրերին համապատասխան, սովորողները ուսումնական նյութը սովորելով՝ զարգանում և դաստիարակվում են:
Ուսումնական դասագրքի գործառույթներից է նաև տեքսի միջոցով աշակերտների կողմից առաջարկվող ուսումնական տեղեկատվության ըմբռնման ապահովումը: Հասկանալի նյութը ամուր հիմք է հանդիսանում սովորողների ուսումնական գործունեության ճիշտ և նպատակայնին կազմակերպման համար: Այն տեղեկատվությունը, որը աշակերտը լավ է հասկանում, նրան ուրախություն է պատճառում և նա սկսում է հաճույքով սովորել:
Անեն պարագայում, դասագրքի ճիշտ օգտագործումը նպաստում է սովորողների աշխարհայացքի ձևավորմանը:

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքում մեր նպատակն էր ուսումնասիրել ուսուցման և դաստիարակության գործընթացների փոխադարձ կապը, ինչպես նաև ուսումնական դասագրքերի դերը, դրանց ներկայացվող պահանջներն ու դաստիարակչական գործառույթները տարրական դասարաններում:
Ուսուցման և դաստիարակության մասին խոսելիս, չենք տարանջատել մեկը մյուսից, քանի որ դրանք կազմում են մեկ միասնություն: դաստիարակության համար գլխավորը միջավայրն է, որը ենթադրում է անձի կատարելագործման գործընթացը, միաժամանակ ներառում է անձի զարգացման բոլոր տարրերը: Իսկ ուսուցումը աշակերտի իմացության, զարգացման, նրա ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման և գիտելիքներ հաղորդելու գործընթաց է :
Ուսուցումն ու դաստիարակությունը միմյանց հետ գտնվում են փոխադարձ կապի մեջ: Ուսուցման և դաստիարակության գործընթացն իրականացնելիս, բավականին կարևոր և առաջնային դեր են խաղում ուսումնական դասագրքերը, որոնք իրենց մեջ ներառում են տվյալ ուսումնական առարկայի գիտական գիտելիքների հիմունքները, համապատասխանում են տվյալ ուսումնական ծրագրերի պահանջներինև նախատեսված են ուսումնական նպատակների իրագործման համար: Ուսումնական դասագիրքը նախատեսում է երեք մանկավարժական գործառույթների իրականացման համար: դրանք են՝ հանրակրթական, դաստիարակող և զարգացնող:
Ուսումնասիրելով նյութը, մենք հանգեցինք այն եզրակացության, որ ուսուցումն ու դաստիարակությունը միասնական լինելով հանդերձ, պետք է իրականացնել կիրառելով տարբեր մեթոդներ ու հնարներ: Այս գործում իր ուրույն տեղն ունի դասագիրքը, որը պետք է համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչին և ծրագրերին: Պետք է ունենա թեմային համապատասխան նկարազարդումներ, լինի մատչելի և դյուրընթեռնելի, հարցադրումները լինեն ճիշտ և տեղին:

Ըստ մեր կատարած հետազոտության, կարծում ենք, որ կարևոր է նաև դասագրքի տեքստերի տառատեսակներն ու տառաչափերը:

Աշխատանքը բաժանել ենք վեց մասի, որի յուրաքանչյուր թեմայի շուրջ հանգամանորեն ներկայացրել ենք մեր ասելիքը:
Նախ կազմել ենք Պլան, որում առկա են թեմաների հաջորդականությունը:

Ներածություն բաժնում ներկայացրել ենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ուսուցումն ու դաստիարակությունը, նրանց փոխկապակցվածությունը: Ապա անդրադարձել ենք դասագրքի նշանակությանը և նրա դերը ուսումնական գործընթացում:
Գլուխ 1 -ը վերնագրել ենք <<Ուսուցման և դաստիարակության գործընթացների փոխադարձ կապը տարրական դասարաններում>> : Այստեղ խոսել ենք ուսուցման գործընթացի , նրա հիմնախնդիրների, իրականացվող գործառույթների, ուսուցման և դաստիարակության փոխադարձ կապի, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների, ծնողների դերի, նրանց կողմից կատարված սխալների մասին: Կարևորել ենք կրտսեր դպրոցականների ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպման համար դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցությունը:
Գլուխ 2-րդը, որի թեման է << Ուսումնական դասագրքերի դերը, դրանց ներկայացվող պահանջներն ու դաստիարակչական գործառույթները տարրական դասարաններում>> ներկայացրել ենք դասագրքի կարևորությունը, նշել որ դասագիրքը այն գիրքն է, որը պարունակում է տվյալ առարկայի գիտական գիտելիքների հիմունքները, համապատասխանում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին և իրականացնում է մի շարք գործառույթներ: Այնուհետև անդրադարձել ենք դասագրքին ուղղված պահանջմունքներին, նրա նշանակությանը, կարևորությանը: Ապա նշել ենք դասագրքերում առկա բնագրերի, տեքստերի
• ճիշտ ընտրություն կատարելուն, նրա կառուցվածքը, պատկերազարդ լինելը, գործառույթները, նշանակությունը, տեղեկատվական աղբյուր հանդիսանալը: Այսպիսով հանգել ենք այն եզրահանգման, որ դասագրքի ճիշտ կիրառումը խթանում է սովորողների աշխարհայացքի ձևավորմանը:

• Առաջարկություն

• Դպրոցի գրադարանն ապահովվել համապատասխան գրականությամբ:
• Գրականությունը պետք է հագեցած լինի արդիական թեմաներով, ժամանակին համահունչ:
• Հարստացնել համայնքի, գյուղի գրադարանները ժամանակակից գրականությամբ, որպեսզի ազատ, տոն օրերին երեխաները կարողանան օգտվել գրականությունից:
• Կիրառել համագործակցային մեթոդներ այլ դպրոցների տարրական դասարանների աշակերտների հետ՝
- Բանավեճի տեսքով
- Խաղերի եւ բեմականացման տեսքով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թունյան Ջ. Ե., Լ.Մ. Երիցյան, կրտսեր դպրոցականների հոգեբանություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2013
2. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ հատոր, Լույս, 1987

3. Ղումաչյան Գ.Ե., Մանկավարժություն, երկու գրքով գիրք մեկ, Երևան, Զանգակ97, 2005
4. Ամիրջանյան Յու. Ս., Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն, Երևան, 2004 5.Գյուլամիրյան Ջ.Հ, մայրենիի տարրական մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2015 6.Կրիվշենկո Լ.Պ., Մանկավարծություն, Պրոսպեկտ, 2010